

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը (ՔՀԶԿ) գումարել է համաժողով՝ “Կանանց Ոչ կառավարական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակությունում” վերնագրով: Դա կլինի մեկօրյա համաժողով, որը տեղի կունենա 2002թ. սեպտեմբերի 20-ին Երևանում և որին կհետևի արդեն գոյություն ունեցող “Գյուղի կանայք Քաղաքացիական Հասարակությունում” ծրագիրը:

Համաժողովում կմասնակցեն Կանանց ՀԿ-ների առաջնորդներ և անդամներ Երևանից, ինչպես նաև Հայաստանի 10 մարզերից, Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, (ՄՄԿ-ի գործակալություններ և այլք), որոնք զբաղվում են կանանց խնդիրներով, տարբեր նախարարություններից շահագրգիռ ներկայացուցիչներ և ուրիշներ: Միջոցառմանը կմասնակցեն 100 հոգի (ներառյալ կազմակերպողները և աջակցող անձնակազմը): Համաժողովը նվիրված կլինի “Հայ կանանց ցանց”-ի ստեղծմանը, որը կապահովի նոր առաջընթացներ կանանց զարգացման, աշխատանքային գործունեությանը և

կիզորացնի այս նախագծի առաջին փուլի նախկին ձեռքբերումները:

Համաժողովում կլինի լիագումար նիստ և երեք շնորհանդեսներ: Շնորհանդեսները կարվեն գյուղի կանանց, Երևանում գործող կանանց ՀԿ-ի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից:

Գյուղի կանանց կողմից արված 3 շնորհանդեսների նպատակները հետևյալն են.

- Քննարկել Հայաստանում կանանց ՀԿ-ների գործունեության առկա խնդիրները քաղաքացիական հասարակությունում
- Ներկայացնել այն խնդիրները, որոնք ծառայում են գյուղի կանանց առջև և առաջարկել ուղիներ անցման ժամանակաշրջանի դժվարությունների հաղթարմանը:
- Քննարկել գյուղի կանանց հեռանկարները կապված իրենց համայնքների խնդիրների հետ:

Երևանում կանանց ՀԿ-ի կողմից արված 3 շնորհանդեսների նպատակներն են.

- Կատարել փորձի փոխանակում Քայն յուրահատուկ հնարավոր վտանգները, որոնցից կանայք պետք է զգուշանան
- Քննարկել, թե ինչպես գնահատել հաջողությունը և ձախողումը

Միջազգային կազմակերպությունների կողմից արված 3 շնորհանդեսների նպատակներն են.

- Մասնակիցներին տեղեկացնել իրենց անցյալ և ներկա գործունեության մասին
- Ներկայացնել արդյունավետ մեթոդաբանություններ և հստակ էթիկետների հատուկ հիմնարար տեսակետներ, որոնցով պետք է առաջնորդվեն հասարակական կազմակերպությունները
- Ծանոթանալ Հայաստանի տեղական հասարակական կազմակերպությունների հետ նրանց գործունեությունները ավելի լավ հասկանալու և նրանցից սովորելու նպատակով:

Օրագրի շահառուներն են..

- համաժողովի մասնակիցները ինչպես նաև կանանց ՀԿ-ների անդամները, և՛ քաղաքի, և՛ գյուղական համայնքներից, որոնք նոր ունակություններ ձեռք կբերեն և կգնահատեն գյուղի կյանքով ապրելու գաղափարի կարևորությանը և տեղեկությունը՝ մասնակցելով քննարկումներին
- գյուղական համայնքները, որոնք կգնահատեն իրենց համայնքներում երրորդ սեկտորի զարգացման գաղափարը
- հայ հասարակությունը, որպես ամբողջություն, կունենա ամուր ՀԿ-ների ցանց

**Կանանց հկ-ների
դերը
քաղաքացիական
հասարակությունում**

20 Սեպտեմբեր,
2002